ԱԳՐՈ Լրատու

ՀՈԿՏԵՄԲԵՐ 15 - 27 2015 Թ. ԹԻՎ 27 (2082)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Բացվել է գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման նոր կենտրոն

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը Գեղարքունիքի մարզի Հայրավանք համայնքում մասնակցել է Գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման կենտրոնի պաշտոնական բացման արարողությանը:

Միջոցառմանը ներկա էին ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան գրասենյակի ղեկավար Քարեն Հիլիարդը, Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի տնօրեն Գագիկ Սարդարյանը, ֆերմերներ և հյուրեր: «Գեղարքունիքի մարզն անասնապահության ոլորտում առաջնակարգ տեղ է զբաղեցնում, իսկ խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակի առումով, մեր երկրի առաջատարն է: Համոզված եմ, որ կենտրոնի բացումը կնպաստի մարզում անասնապահության ճյուղի առավել զարգացմանն ու ընդլայնմանը», – նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը:

Նախարարի խոսքով՝ նորաբաց կենտրոնը թվով 12-րդն է հանրապետությունում: Գեղարքունիքի մարզում առաջիկա ամսվա ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ, նախատեսում է բացել ևս երկու նմանատիպ կենտրոն՝ Ճամբարակ և Վարդենիս համայնքներում:

2

ՀԱՅԱԳՐՈՖՈՐՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարարի զեկույցը

Վերջին տարիներին գյուղատնտեսության ոլորտում ապահովվել է էական տնտեսական աճ: Գյուղատնտեսությունում ձևավորվում է երկրի համախառն ներքին արդյունքի շուրջ 1/5 մասը, իսկ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության հետ մեկտեղ՝ համախառն ներքին արդյունքի մեջ ագրոպարենային ոլորտի մասնաբաժինը կազմում է ավելի քան 26 %:

ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը, հոկտեմբերի 16-ին՝ Պարենի համաշխարհային օրը, նշում է իր հիմնադրման 70 տարին: Այդ հոբելյանական տարեդարձի առթիվ ուղղում եմ իմ շնորհավորանքները և շնորհակալություն եմ հայտնում Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությանը՝ վերջին 20 տարիներին Հայաստանի գյուղատնտեսությունում իրականացրած ծրագրերի և աջակցության համար:

Այս տարին ՄԱԿ-ի կողմից հայտարարվել է հողի միջազգային տարի: Ընդհանուր առմամբ, հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները, 2011-2015 թվականների ընթացքում, ավելացել են գրեթե 68000 հեկտարով, միայն 2015 թվականին՝ 18500 հեկտարով և կազմել են 351300 հեկտար: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2015 թվականին հասել է 78.5 %-ի՝ 2010 թվականի 63.2 %-ի դիմաց: Ընթացիկ տարվա հունվար-օգոստոս ամիսներին գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 504 միլիարդ 900 միլիոն դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ 13.5 %-ով: Հանրապետության բոլոր մարզերում գրանցվել է գյուղատնտեսության բոլոր ճյուղերի արտադրության ծավալների զգալի աճ:

Նախարարությունը, գյուղատնտեսության ոլորտին առչվող խնդիրների լուծման գործընթացում ակտիվ համագործակցություն է ունեցել հանրապետության բոլոր մարզպետարանների և նրանց համապատասխան ստորաբաժանումների հետ:

Գյուղատնտեսության ոլորտում պետական քաղաքականությունն իրականացվում է մի շարք ծրագրերի միջոցով՝ «Ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման», «Գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման» ծրագրերը, որոնք նպաստել են հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացմանը և հացահատիկային տնտեսության ինտենսիվացման մակարդակի բարձրացմանը:

3

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀՀ Վարչապետ Հովիկ Աբրահամյանը, Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի «Երևան Էքսպո» ցուցահանդեսային համալիրում, մասնակցել է «ԱրմՊրոդԷքսպո» միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին և «Հայագրոֆորում» համաժողովին: 2011 թ. սկսած, ՀՀ կառավարության որոշմամբ, հոկտեմբերի երրորդ կիրակին, Հայաստանում նշվում է՝ որպես Գյուղատնտեսության աշխատողի օր:

Վարչապետը շրջել է Հայաստանի և Արցախի ագրոպարենային ոլորտը ներկայացնող ցուցահանդեսի տաղավարներով, ծանոթացել նրանց արտադրատեսականուն, գործունեությանը, առկա խնդիրներին, ընթացիկ և հեռանկարային ծրագրերին: «ԱրմՊրոդԷքսպո» ցուցահանդեսին մասնակցել են նաև հանրապետության բոլոր մարզերը:

«ԱրմՊրոդԷքսպո» ցուցահանդեսի տաղավարներում Հովիկ Աբրահամյանը մասնակցել է «Հայագրոֆորում» համաժողովի բացմանը: Ողջունելով և շնորհավորելով համաժողովի մասնակիցներին՝ վարչապետը նշել է. «Խորհրդանշական է, որ այս տարի համաժողովի անցկացման օրը համընկել է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության հիմնադրման օրվա հետ: Այս առիթով ցանկանում եմ սրտանց շնորհավորել կազմակերպությանը՝ հիմնադրման 70-ամյա հոբելյանի կապակցությամբ: Գնահատելի է Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի զարգացման գործում ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ներդրած ավանդը, ինչի համար հայտնում եմ իմ երախտագիտությունը»: Նա նշել է, որ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելի քան 97 տոկոսն ապահովվում են ընտանեկան գյուղացիական տնտեսությունները: 2011 թ. ՀՀ նախագահի կողմից գյուղատնտեսությունը հայտարարվեց գերակա ոլորտ, ինչն իր արտացոլումը գտավ նաև 2014 թ. ընդունված ՀՀ կառավարության ծրագրում: 2015 թ. առաջին ութ ամսվա արդյունքներով, ՀՀ տնտեսության մեջ այն արձանագրել է աճի ամենաբարձր տեմպերը:Կառավարության ղեկավարը նշել է, որ գյուղատնտեսությունում վերջին տարիներին գրանցված դրական տեղաշարժերի՝ հողային ռեսուրսների նպատակային օգտագործման, հացահատիկային տնտեսության ինքնաբավության մակարդակի, գյուղատնտեսությունում օգտագործվող ռեսուրսների և վարկերի մատչելիության բարձրացման արդյունքում ապահովված տնտեսական աճի հետ մեկտեղ ոլորտում առկա են նաև խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է պետական քաղաքականության նոր մոտեցումների կիրառում, օժանդակություն և ներդրումների ներգրավում: ՀՀ կառավարությունը 7 մլրդ ՀՀ դրամ է հատկացրել Կենտրոնական բանկին՝ գյուղատնտեսական վարկերը սուբսիդավորելու նպատակով: 14 տոկոսանոց վարկը հողօգտագործողներին է հասնելու 8 տոկոսով, 6 տոկոսը սուբսիդավորում է կառավարությունը: «Ջերմորեն շնորհավորում եմ գյուղատնտեսության ոլորտի բոլոր ներկայացուցիչներին՝ մաղթելով քաջառողջություն և բարեկեցություն», - ասել է վարչապետը:

Գյուղատնտեսության բնագավառում ներդրած ավանդի և գյուղատնտեսության աշխատողի օրվա առթիվ Հովիկ Աբրահամյանը ՀՀ վարչապետի հուշամեդալով է պարգևատրել «Արարատի գինու գործարան» ՍՊԸ գլխավոր տնօրեն Արմեն Սարգսյանին, Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ռուբեն Կարապետյանին, «Եվրոթերմ» ՓԲԸ հիմնադիր Էդիկ Ղազարյանին, ՀՀ վարչապետի շնորհակալագրով խրախուսել՝ Արարատի մարզի Դվին գյուղի ֆերմեր Գևորգ Նազարյանին, «Եղեգնաձորի պահածոների գործարան» ՍՊԸ տնօրեն Սարգիս Պողոսյանին, «Պրոգրես Ագրո» ՍՊԸ հիմնադիր տնօրեն Սամվել Կարապետյանին, Արմավիրի մարզի Լենուղի գյուղի ֆերմեր Սարգիս Հովսեփյանին և «ՀԱԱՀ» հիմնադրամի «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի տնօրեն Աղվան Սահակյանին:

Զարգացման միակ ճանապարհը կոոպերացիան է Էջ 4

«ARMPROD EXPO»- 2015 հյուրընկալեց մեծ թվով այցելուների Էջ 5

Մասնագետի խորհուրդը Էջ 7

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Բացվել է գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման նոր կենտրոն

1

Իր խոսքում անդրադառնալով «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրին՝ նախարար Սերգո Կարապետյանը գոհունակությամբ նշել է, որ ներկայումս մարզից ծրագրում ընդգրկված է ավելի քան 40 համայնք: Ընդգծելով ծրագրի կարևորությունն ու արդյունավետությունը՝ նախարարը նաև հավելել է, որ նմանատիպ ծրագրեր կիրականացվեն հանրապետության տարբեր մարզերում:

ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան գրասենյակի ղեկավար Քարեն Հիլիարդն իր հերթին ընդգծել է գյուղատնտեսության ոլորտի զարգացման կարևորությունը Հայաստանում, մասնավորապես Գեղարքունիքի մարզում, որն ապահովում է երկրի գյուղատնտեսական արտադրանքի մոտ 20 տոկոսը: Նրա համոզմամբ, ագրարային ոլորտը Հայաստանում ունի մեծ ներուժ, և ԱՄՆ ՄԶԳ նպատակն է՝ աջակցել այդ ներուժի արդյունավետ օգտագործմանը:

Նոր մասնագիտացված կենտրոնը, որը հիմնվել է CARD հիմնադրամի կողմից ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ, համայնքի անասնաբույծներին, ֆերմերներին և գյուղատնտեսությամբ զբաղվող անհատներին կտրամադրի տեխնիկական և բիզնես օժանդակություն՝ կենդանիների առողջության և անասնապահության հետ կապված հարցերում: Կենտրոնում աշխատելու են բարձրակարգ մասնագետներ, որոնք ցանկացողներին կմատուցեն անհրաժեշտ խորհրդատվական ծառայություններ:

Կենտրոնը կնպաստի առաջավոր գյուղատնտեսական բիզնես տեխնիկայի տարածմանը: Այն կամրապնդի տեղի ֆերմերների հմտությունները և լավագույն փորձը կփոխանցի բոլոր նրանց, ովքեր տրամադրում են գյուղատնտեսական և անասնաբուժական, ինչպես նաև անասնաբուծական և անասնապահական ծառայություններ: Կենտրոնում կմատուցվեն նաև գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման ծառայություններ:

Բացի այդ, կենտրոնում կանցկացվեն աշխատաժողովներ և վերապատրաստման ծրագրեր, որոնք կվարեն տեղի և օտարերկրյա մասնագետները: Նախատեսվում է սպասարկել Գեղարքունիքի մարզի 10 համայնքների 2 հազարից ավելի ֆերմերների:

Այնուհետև նախարար Սերգո Կարապետյանն այցելել է Գավառի տարածաշրջանի Գանձակ համայնք, որտեղ դիտարկել է կարտոֆիլի բերքահավաքի ընթացքը: Այստեղ նախարարը հավաստիացել է, որ կարտոֆիլի բերքն ընթացիկ տարում բավական առատ է և բարձրորակ, և գյուղացիները հեկտարից մոտ 600 ցենտներ բերք են ստանում:

Ամփոփելով այցի արդյունքները՝ նախարարը լրագրողների հետ ճեպազրույցում նշել է, որ 2015 թվականին Գեղարքունիքի մարզում գյուղատնտեսության ոլորտում բարձր ցուցանիշներ են գրանցվել, խոշոր եղջերավոր կենդանիների անասնագլխաքանակն ավելացել է մոտ 4,6 տոկոսով, ինչի շնորհիվ ավելացել են նաև կենդանական ծագման մթերքների արտադրության ծավալները:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Նախագահը մասնակցել է ՀԱԱՀ հիմնադրման 85-ամյակին նվիրված միջոցառումներին

Նախագահ Սերժ Սարգսյանը Հայաստանի ազգային ագրարային համալսարանում մասնակցել է բուհի հիմնադրման 85-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումներին, որոնց շրջանակներում ՀԱԱՀ մասնաշենքում բացվել է կենսաբանական հետազոտությունների լաբորատորիան:

Հանրապետության նախագահը շրջայց է կատարել ժամանակակից սարքավորումներով հագեցած նորաբաց լաբորատորիայում, ծանոթացել դրա հնարավորություններին, լաբորատորիայում նախատեսվող ուսումնասիրությունների շրջանակին:

Հանրապետության նախագահը եղել է նաև ՀԱԱՀ-ում 2001 թվականից գործող Շախմատի թանգարանում, որտեղ ներկայացված են շախմատային խոշոր իրադարձությունների մասին պատմող արժեքավոր նյութեր, հայ շախմատիստների հաղթանակների պատմությունը և այլ ուշագրավ տեղեկատվություն: Սերժ Սարգսյանն այնուհետև բուհի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների և միջոցառմանը հրավիրված բազմաթիվ հյուրերի հետ համալսարանի դահլիճում մասնակցել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հիմնադրման 85-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին:

Բուհի հոբելյանի կապակցությամբ, ՀՀ նախագահը գիտության և կրթության բնագավառում ներդրած նշանակալի ավանդի համար ագրարային համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մի շարք ներկայացուցիչների պարգևատրել է պետական պարգևներով, խրախուսել՝ շնորհակալագրերով:

ՀԱՆԳՐՊՈՒՄ

Անտառների արդյունավետ կառավարման ծրագրի ընթացքը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Համաշխարհային բանկի պատվիրակությանը, որի կազմում էին բնապահպանական գծով ավագ տնտեսագետ, FLEG ծրագրի ղեկավար Գայանե Մինասյանը, անտառային ոլորտի ավագ մասնագետ Տուուկկա Կաստրենը, բնապահպան Վլադիսլավա Նեմովան, FLEG ծրագրի հայաստանյան համակարգող Արուսյակ Ալավերդյանը:

Հանդիպման նպատակն էր քննարկել Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք (ԵՀԳԳ) Արևելյան երկրներում. անտառային օրենսդրության կիրարկման և կառավարման բարելավման» երկրորդ (ENPI FLEG 2) ծրագրի ընթացքը և նախանշել համագործակցության առաջիկա ծրագրերը:«Վերջին տարիներին մեր երկրում բավականաչափ աշխատանք է տարվել անտառների պահպանման և արդյունավետ կառավարման ուղղությամբ, նվազել են ապօրինի անտառային հատումները, սակայն ոլորտում դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնց լուծման համար ակնկալում ենք միջազգային կառույցների, այդ թվում՝ նաև Համաշխարհային բանկի աջակցությունը», - ողջունելով հյուրերին՝ նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Մասնավորապես, նախարարի խոսքով, ոլորտում անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններից բացի, զգացվում է տեխնիկական օժանդակության, նորագույն սարքավորումների ներդրման կարիք, որոնք թույլ կտան մշտադիտարկումներ իրականացնել անտառային տարածքներում՝ դրանով իսկ նպաստելով անտառների վերականգնմանն ու առավել արդյունավետ կառավարմանը: Նախարարը տեղեկացրել է, որ ներկայումս պետությունը ձեռնարկում է բոլոր հնարավոր միջոցները անտառային տարածքների ընդլայնման ուղղությամբ:

Կողմերը քննարկել են ENPI FLEG 2 ծրագրի ընթացքը, որի նպատակն է աջակցել անտառների արդյունավետ կառավարմանը՝ անտառային քաղաքականության, օրենսդրության և ինստիտուցիոնալ կառուցվածքների արդյունավետության բարձրացման միջոցով: Պատվիրակության անդամներն իրենց հերթին ընդգծել են Համաշխարհային բանկի պատրաստակամությունը շարունակել համագործակցությունը հայկական կողմի հետ անտառային ոլորտի բարելավման ուղղությամբ և շեշտել, որ ծրագրի ավարտից հետո բանկը նպատակադրված է շարունակել օժանդակել Հայաստանին այս հարցում:

ՀԱՄԱԺՈՂՈՎ

Օժանդակել գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորմանը

Վերջերս Երևանում տեղի է ունեցել Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման (ENPARD) ծրագրի գործընկերների երկրորդ համաժողովը, որին մասնակցել են ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, Հայաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավար, դեսպան Պիոտր Սվիտալսկին, Հայաստանում Եվրամիության պատվիրակության միջազգային օգնության և համագործակցության պատասխանատու Ջոն Բարքերը, այլ պաշտոնյաներ:

Միջոցառման նպատակն է՝ ներկայացնել և քննարկել գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող «Կայուն գյուղատնտեսական զարգացման ռազմավարության վերջին զարգացումներն ու ձեռքբերումները, ENPARD ծրագրի իրականացման ընթացքը», ինչպես նաև դոնորների համակարգման մեխանիզմները: Եռամյա այս ծրագիրը, որը մեկնարկել է 2015 թվականի հունվարից, իրականացվում է ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և ՄԱԿ-ի զարգացման գործակալության կողմից՝ Եվրոպական Միության և Ավստրիական զարգացման գործակալության համաֆինանսավորմամբ: «Կոոպերատիվների ստեղծումը մեր գյուղատնտեսության ապագան է, ուստի այն այսօր նախարարության գերակա ուղղություններից է: Մեր նպատակն է՝ բարենպաստ պայմաններ ստեղծել Հայաստանում կոոպերացիայի զարգացման համար, և մեկնարկող ծրագիրը միտված է նպաստել գյուղացիական միավորումների ստեղծմանն ու խթանել գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորումը», - նշել է գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը: Նա բարձր է գնահատել Եվրամիության հետ սերտ համագործակցությունը և վերջին տարիների ձեռքբերումները՝ հույս հայտնելով, որ այն հետագայում էլ ավելի կամրապնդվի:

Հայաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավար, դեսպան Պիոտր Սվիտալսկին մասնավորապես նշել է, որ հիացած է հայկական գյուղատնտեսական արտադրանքի որակով և համային հատկանիշներով:

ENPARD ծրագրին լրացուցիչ տեխնիկական աջակիցների՝ Միավորված ազգերի զարգացման ծրագրի (UNDP) և ՄԱԿ-ի արդյունաբերության զարգացման կազմակերպության (UNIDO) ներկայացուցիչներն իրենց զեկույցներում ներկայացրել են կոոպերատիվների զարգացման, բնածին աղետների դեմ պայքարի, խորհրդատվության որակի բարելավման և մի շարք այլ խնդիրների շուրջ իրականացված աշխատանքները:

Առանձին անդրադարձ է կատարվել նաև ծրագրի «Արտադրող խմբերի և արժեշղթաների զարգացում» բաղադրիչին, որն իրականացվելու է Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերում: Մասնավորապես նշվել է, որ բաղադրիչի շրջանակում ստացվել է թվով 190 հայտադիմում, որոնք ներկայումս ուսումնասիրման փուլում են: Ծրագրի կողմից առաջնահերթությունը տրվում է մրգի, հատապտղի, բանջարեղենի, հացահատիկի և ընդեղենի, կաթի և կաթնամթերքի, ինչպես նաև այլ գյուղմթերքի արտադրության և վերամշակման ոլորտներում նորարարական գաղափարներ (նոր տեխնոլոգիա, նոր արտադրանք) առաջարկող խմբերին:

Համաժողովին ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ներկայացվել է նաև միջազգային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի համակարգման ծրագրի նախագիծը, որի նպատակն է՝ առավել թիրախային, թափանցիկ, արդյունավետ և հանրամատչելի դարձնել համատեղ իրականացվող ծրագրերը:

ԱԳՐՈ Լրատու
Հոկտեմբեր 15 - 27, 2015 թ.
թիվ 27 (2082)

ՀԱՅԱԳՐՈՖՈՐՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարարի զեկույցը

1 ↖

Հացահատիկային մշակաբույսերի արտադրության ծավալները 2015 թվականին, ըստ օպերատիվ տվյալների, գերազանցել են նախորդ տարվա մակարդակը՝ շուրջ 8 %-ով և կազմել 637.0 հազ. տոննա: Ցորենի արտադրության ծավալները կազմել են շուրջ 373.0 հազ. տոննա, 2014 թվականի 338 հազ. տոննայի դիմաց, գրանցվել է 10.5 % աճ: Ծրագրերի իրականացումն իր դրական ազդեցությունն է ունեցել ցորենի ինքնաբավության մակարդակի բարձրացման վրա: Այդ ցուցանիշը 2014 թվականին կազմել է շուրջ 50.0 %՝ 2010 թվականի 33.5 %-ի դիմաց:

Վերջին տարիներին իրականացվել և ներկայումս շարունակվում են գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական նյութական ռեսուրսների մատչելիության բարձրացման միջոցառումները: Դրան են ուղղված «Հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով հանքային պարարտանյութերի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրերը: Գյուղատնտեսության կայունության և մրցունակության բարձրացման համար կարևոր է համարվում վարկային ռեսուրսների մատչելիության մակարդակի բարձրացումը: Վերջինիս նպաստել է «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիրը: 2015 թվականից վարկերի տոկոսադրույքները սուբսիդավորվում է 6 տոկոսով՝ նախորդ տարիներին գործող 4 տոկոսի փոխարեն:

Հանրապետությունում անասնաբուծության խթանմանը նպաստել է «Տավարաբուծության զարգացման ծրագիրը»: Անասնապահության զարգացման համար առանձնակի կարևորվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագիրը: Ծրագիրն իրականացվում է հանրապետության անասնապահությամբ մասնագիտացված վեց մարզում, նպատակն է՝ աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող բարձրլեռնային և սահմանամերձ համայնքներին: Ծրագրի առանցքային դրույթներից է՝ գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը և, դրանց գործունեությանը նպաստելու միջոցով, մրցունակ անասնապահության զարգացումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսված 55 համայնքի փոխարեն, տնտեսված միջոցների ներգրավմամբ, աշխատանքներ են իրականացվել 91 համայնքում: Ծրագրի իրականացման արդյունքում, գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը ներառված համայնքներում բարձրացել է 20.0-25.0 %-ով, ավելացել է անասնագլխաքանակը: Հաշվի առնելով ծրագրի դրական արդյունքները՝ 2015 թվականին մեկնարկել է երկրորդ ծրագիրը, որը ընդգրկում է հանրապետության 8 մարզի 100 գյուղական համայնք:

Գյուղատնտեսության զարգացման համար առանձնակի կարևորվում է գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության զարգացումն ու ծառացած խնդիրների լուծումը: Ներկայումս գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ոլորտին բաժին է ընկնում արդյունաբերության համախառն արտադրանքի 38.4 %-ը: Վերամշակման համակարգի գործունեության ակտիվացումը և արտադրության ծավալների աստիճանական ավելացումը որոշակիորեն նպաստել են գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնախնդրի մեղմմանը և գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը: Սակայն, առկա են որոշակի խնդիրներ: Մենք պետք է հասնենք նրան, որ բոլոր գյուղատնտեսական հումք արտադրողների և վերամշակողների միջև նախօրոք հաստատվեն պայմանագրային հարաբերություններ, որը խնդրի լուծման հիմնական նախապայմաններից է: Գյուղատնտեսական մթերք վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է շուրջ 40 հազ. տոննա բանջարեղեն, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 21.4 %-ով, իսկ պտղի մթերումների ծավալը կազմել է 17500 տոննա, որն ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից՝ 53.7 %-ով: Մինչև մթերման գործընթացը սկսելը, կատարվել է մթերվող խաղողի կանխատեսվող ծավալների մոնիթորինգ, ըստ որի՝ ընթացիկ տարվա շուրջ 210 հազ. տոննա խաղողի մթերման առաջարկի դիմաց մթերման պահանջարկը կազմել է 160.0 հազ. տոննա:

Ստեղծված իրավիճակում, խաղողի մթերման կազմակերպման համար անհրաժեշտություն առաջացավ լուծելու շուրջ 50.0 հազ. տոննա խաղողի լրացուցիչ քանակության մթերման խնդիրը:

Իրականացված նախապատրաստական և հետագա ամենօրյա աշխատանքի, ինչպես նաև՝ ՀՀ նախագահի և վարչապետի անմիջական աջակցության արդյունքում, մթերվել է 202 հազ. տոննա խաղող, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 20 հազ. տոննայով, իսկ ամբողջ տարվա ծավալը՝ 19 հազ. տոննայով: Խաղողի մթերման գործընթացը՝ որոշակի բարդություններով հանդերձ, շարունակվում է, և երաշխիքներ կան առաջարկվող խաղողի բերքն ամբողջությամբ մթերման համար:

Գյուղատնտեսական մթերքների իրացմանը նպաստելու համար ընթացիկ տարում շարունակվել է մայրաքաղաքում գյուղատնտեսական մթերքների տոնավաճառների կազմակերպումը: Գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների աճը նպաստել է ընթացիկ տարում թարմ բուսաբուծական մթերքների արտահանման ծավալների ավելացմանը: Հանրապետությունից արտահանվել է 62300 տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, այդ թվում՝ 31100 տոննա պտուղ և հատապտուղ, որից՝ 21300 տոննա ծիրան: Խաղողի արտահանման ծավալը կազմում է 7000 տոննա՝ նախորդ տարվա 4900 տոննայի դիմաց: Ընդհանուր առմամբ, արտահանման ծավալները գերազանցում են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 65.1%-ով, իսկ 2014 թվականի արտահանման տարեկան ցուցանիշն արդեն իսկ գերազանցվել է 33.6 %-ով (15.6 հազ. տոննայով): Արտահանման գործընթացը շարունակվում է, և իրական նախադրյալներ կան նախորդ տարվա համեմատությամբ՝ ծավալների գրեթե կրկնապատկման համար: Ընթացիկ տարում ընդլայնվել է թարմ բուսաբուծական մթերքներ արտահանվող երկրների շրջանակը: Արտահանման ծավալների մեջ գերակշռում է Եվրասիական տնտեսական միության երկրների մասնաբաժինը՝ մասնավորապես ՌԴ բաժինը կազմում է արտահանման ընդհանուր ծավալի 83.6 %-ը՝ 2014 թվականի նույն ժամանակահատվածի 39.6 %-ի դիմաց:

ՀՀ ԳՆ մշտապես աշխատանքներ է իրականացնում տարբեր երկրների և միջազգային տնտեսական կազմակերպությունների հետ՝ բազմակողմանի կապերի հաստատման, դրանց ամրապնդման և փոխշահավետ համագործակցության ապահովման ուղղությամբ:

2015 թվականի հունվարին մեկնարկել է «Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման» (ENPARD) եռամյա ծրագիրը, որի նպատակն է՝ աջակցել գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանը, ինչպես նաև գործող կոոպերատիվների բիզնես կարողությունների ընդլայնմանը, տեխնոլոգիաների արդիականացմանը, շուկայավարմանը, ռիսկերի նվազեցման համակարգի ներդրմանը և այլ աշխատանքների իրականացմանը:

Հոկտեմբերի 1-ին հաստատվել է նաև Եվրամիության և Ավստրիայի զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող Հայաստանում օրգանական գյուղատնտեսության զարգացման ծրագիրը, 3.2 մլն եվրո բյուջեով: Նախարարությանն իրենց մշտական աջակցությունն են ցուցաբերել հանրապետության գյուղատնտեսությունում ընդլայնված գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները՝ «Ֆերմերների ազգային միավորումը», «Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությունը, Հայկական ագրագյուղացիական միավորումը և այլն:

Նախարարությունը, իր գործունեության շրջանակներում, համագործակցում է գյուղատնտեսության ոլորտի հետ առնչվող այլ կազմակերպությունների, մասնավորապես՝ արդյունավետ համագործակցություն է ապահովում «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի հետ: Դեռևս 2013 թվականին գյուղատնտեսության նախարարության և Գյուղատնտեսական Դաշինքի միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որի նպատակն է՝ ապահովել համագործակցության մեծ շրջանակ:

Գյուղատնտեսական արտադրությունում արդյունավետ տնտեսավարմանը դեռևս լրջորեն խոչընդոտում են գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը: Ստեղծված իրավիճակում, չնայած որոշակի առաջընթացի, դանդաղ են ընթանում տնտեսությունների խոշորացման, կոոպերացման, գյուղացիական տնտեսությունների համատեղ գործունեության խթանման գործընթացները: Խնդիրները կապված են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման, սերմնաբուծության համակարգի բարելավման, գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացման, տոհմային գործի կազմակերպման հետ: Առկա խնդիրներից է նաև նոր տեխնոլոգիաների ներդրման դանդաղ ընթացքը (կաթիլային ոռոգման, հակակարկտային ցանցերի, ինտենսիվ այգիների հիմման և այլն):

Միջոցառման կազմակերպման աջակցության և հովանավորման համար շնորհակալություն եմ հայտնում Հայաստանի առաջատար բջջային օպերատոր ՎիվաՍել-ՄՏՍ-ին, ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությանը: Մեր երկրում գյուղատնտեսության զարգացումն ապահովվում է հայ գյուղացու ջանքերի, հմտությունների, աշխատասիրության, պետություն-մասնավոր հատված համագործակցության և պետական աջակցության շնորհիվ:

Շնորհավորում եմ գյուղատնտեսության աշխատողի օրվա առթիվ և ցանկանում ոլորտի մարդկանց քաջ առողջություն, խաղաղ երկինք, բարեկեցություն, առատ բերք ու բարիք:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

ՀՈԲԵԼՅԱՆ

ԱԳՐԱՐԱՅԻՆԸ 85 ՏԱՐԵԿԱՆ Է

Հոկտեմբերի 22-ին Հայաստանի ազգային ագրարային համալսարանում մեկնարկեց բուհի հիմնադրման 85-ամյա հոբելյանին նվիրված ամենամյա միջազգային գիտաժողովը: Այդ կապակցությամբ համալսարան են ժամանել տարբեր երկրների ավելի քան 40 ներկայացուցիչներ՝ ագրարային համալսարանների ռեկտորներ և ճանաչված գիտնականներ:

Մասնակիցների գրանցումից հետո կայացավ գիտաժողովի լիագումար նիստը. բացման խոսքով հանդես եկավ ՀԱԱՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Ա. Թարվերդյանը: Նա նշեց, որ 18-րդ միջազգային գիտաժողովի աշխատանքներն, առանց բացառության, բոլոր տարիներին միտված են եղել ագրարային ոլորտի հրատապ հիմնախնդիրների համակողմանի դիտարկմանը: Այս տարի համաժողովը կրկնակի կարևոր նշանակություն ունի, քանի որ բուհի հիմնադրման 85-րդ տարեդարձի հետ է համընկնում: Այնուհետև ՀԱԱՀ ռեկտորն անցավ «հաճելի պարտականությունների» կատարմանը: ՀԱԱՀ «Ոսկե հուշամեդալ» և «Պատվավոր դոկտորի» աստիճան շնորհվեց Ղազախստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր-պրոֆեսոր, ակադեմիկոս Տ.Ի. Եսպոլովին: ՀԱԱՀ «Ոսկե հուշամեդալ» և «Պատվավոր պրոֆեսորի» կոչմանն արժանացան արտերկրի գործընկեր համալսարաններից ժամանած ականավոր գիտնականներ: Իրենց հերթին հյուրերը շնորհավորանքի խոսքեր հղեցին բուհի 85-ամյակի կապակցությամբ: «Ոսկե հուշամեդալ»-ով պարգևատրվեցին նաև համալսարանի թվով 30 աշխատակիցներ:

Այնուհետև գիտաժողովն իր աշխատանքը շարունակել է բաժանմունքներում, և օրը եզրափակվել է տոնական համերգով:

www.anau.am

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՀՈԳՍԵՐՆ ՈՒ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Մասիսի տարածաշրջանի Դաշտավան գյուղը, որն այսօր ունի 2250 բնակիչ, նախկինում ունեցել է Շոռլու անվանումը (աղի հող):

Գյուղի հիմնական բնակիչները եկել են Աբովյանից և Շամշադինի շրջանից, մի մասն էլ՝ Ապարանից և Մարտունու շրջանից: Գյուղը Դաշտավան է վերանվանվել 1978 թվականին: Բնակչությունն այսօր զբաղվում է մասամբ անասնապահությամբ, այգեգործությամբ, դաշտավարությամբ, մշակում են ջերմասեր բանջարաբոստանային մշակաբույսեր: Համայնքն ունի 190 հազար մ^2 սեփականաշնորհված հող, որտեղ հիմնականում բանջարեղեն է աճեցվում: Գյուղի երիտասարդությունը հիմնականում աշխատում է Երևանում, իսկ արտագնա աշխատանքի մեկնողների թիվը շատ քիչ է:

Դաշտավան գյուղի հոգսերով մտահոգված Սերյոժա Խաչատրյանը 1999 թ. ընտրությունից հետո կարողացել է գազաֆիկացման աշխատանքները հասցնել ավարտին, կարգավորել ոռոգման ջրի հետ կապված խնդիրները: Նախկինում Հրազդան գետի ջուրն էին օգտագործում, ներկայումս գետի ջուրը պակասել է և չեն կարողանում օգտվել այդ ջրից, այնուամենայնիվ, այսօր գյուղը ոռոգման ջրի խնդիր չունի, միայն վերանորոգման կարիք կա, կապված ոռոգման ցանցի հետ, որն անցկացվել է 50 տարի առաջ: Ամբողջությամբ լուծված է խմելու ջրի, մասամբ՝ փողոցների լուսավորության հարցերը, իսկ ասֆալտապատ է միայն կենտրոնական փողոցը:

Զրույցի ընթացքում Ս. Խաչատրյանը նշել է. «Գյուղի հիմնական խնդիրն այսօր մնում է մանկապարտեզի վերանորոգման աշխատանքների իրականացման, վերաբացման հարցը, շուրջ 100 երեխաներ սպասում են դպրոցի երկրորդ մասնաշենքում հատկացված մանկապարտեզի վերաբացմանը: Մարզպետը խոստացել է հնարավորության դեպքում աջակցել այդ աշխատանքներին»:

Այսօր համայնքի բնակիչները հնարավորություն ունեն օգտվելու կապի հանգույցից և բուժկետից: Արվեստի օջախում գործում են պարային խմբեր, իսկ դպրոցում սովորում են 350 աշակերտներ: Նախորդ տարի վերանորոգվել է դպրոցի տանիքը, լուծվել է ջեռուցման խնդիրը, սակայն դպրոցում կոսմետիկ վերանորոգման կարիք իրոք զգացվում է: Գյուղն ունի ֆուտբոլի թիմ, որը մասնակցում է մարզի առաջնությանը, իսկ մարզումներն անցկացնում են ֆուտբոլի դաշտում: Պարային խումբն էլ հաջողությամբ հանդես է եկել Վրաստանում, մասնակցում է համայնքում կազմակերպված միջոցառումներին: Ներկա պահին գյուղում կառուցվում է հանդիսությունների, միջոցառումների անցկացման սրահ, որը՝ ըստ պայմանագրի, շահագործման կհանձնվի դեկտեմբերի 25-ին:

Մ. Կիրակոսյան

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՖԵՐՄԵՐՈՒԹՅՈՒՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻԱԿ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ Է

Ընդունված ճշմարտություն է, միասնականությունը միշտ էլ տանում է հզորացման: Միասնաբար գործելով՝ տնտեսությունն ավելի է զարգանում, առաջընթաց ունենում: Այդ մտայնությամբ էլ Շիրակի մարզի Հայկավան գյուղում ձևավորվեց տոհմային ֆերմերային տնտեսություն:

Տնտեսությունը դեռևս չունի տոհմային կարգավիճակ, չնայած արդեն ծնվում է մաքրացեղ կենդանիների 3-րդ, 4-րդ սերունդը: Տնտեսության ղեկավար Սամվել Ոսկանյանը, եղբայների Գագիկի և Արմենի հետ համատեղ, տարիներ առաջ իրականություն դարձրեց ընտանեկան վաղեմի երազանքը, այն է՝ ունենալ բարձրարժեք, բարձր մթերատու կենդանիներ: Ոչինչ չէին ժառանգել, սկսեցին ոչնչից: Սեփական միջոցներով և ուժերով կառուցեցին 500 մ^2 տարածք ունեցող անասնագոմ, որտեղ այժմ 50 գլուխ բարձր կաթնատու կովեր են բուծվում: Խնամում են նաև 23 գլուխ երինջներ: «Տնտեսությունում ամբողջությամբ կիրառվում է կովերի զուգավորման արհեստական սերմնավորման եղանակը: Տոհմային գործի կազմակերպման գործընթացում մեզ աջակցել է «GARD» հիմնադրամը, ոչ միայն պատրաստել է մասնագետներ, այլև տրամադրել անհրաժեշտ պարագաներ», - պատմում է Սամվել Ոսկանյանը: Տնտեսությունում այժմ բուծվում են սևաբղետ, հոլշտին և շվից ցեղերի կենդանիներ:

Գործընթացների ճիշտ կազմակերպման նպատակով, ֆերմերային տնտեսությունում կատարվել է աշխատանքի բաժանում: Արմեն Ոսկանյանը զբաղվում է վարի, ցանքի աշխատանքներով, մեքենատրակտորային հավաքակայանով: Գագիկն իրականացնում է անասնաբուժական կանխարգելիչ միջոցառումներ, կատարում արհեստական սերմնավորման աշխատանքներ:

Ամռան ամիսներին կենդանիներին տեղափոխում են հեռագնա արոտավայրեր, ալպյան գոտիներ, որտեղ ոչ միայն լավ են սնվում, այլև բարձրանում է մթերատվությունը: Աճեցնում են նաև բտման կենդանիներ: Տարվա մյուս ամիսներին կենդանիների լիարժեք կերակրման համար պատրաստում են եգիպտացորենի սիլոս: Սեփական կերարտադրության ապահովման նպատակով, սեփականաշնորհված 15 հա և վարձակալած հողատարածքների վրա մշակում են կորնգան, առվույտ, ցորեն և գարի: Կաթնատվության բարձրացման նպատակով կովերին տալիս են նաև հյութալի կերեր: Ծրագրերից մեկն էլ՝ կաթի վերամշակման արտադրամասի ստեղծումն է: Այդ դեպքում կունենան նաև խոզաբուծական տնտեսություն, կենդանիներին կկերակրեն նաև կաթի արտադրամասից ստացված սիճուկով: «Խոզաբուծությունը եկամտաբեր ճյուղ է, քանի որ միսն ունի բարձր գին և կայուն պահանջարկ», - ասում է Սամվել Ոսկանյանը: Ի դեպ, մասնագիտությամբ տնտեսագետ ֆերմերն իր գիտելիքները ներդնում է ընտանեկան տնտեսությունում՝ վերջինիս գործունեությունը դարձնելով ավելի արդյունավետ: «Ինչպես ցանկացած տնտեսություն, մենք նույնպես զարգացման առաջընթացի կարիք ունենք, նաև պետական աջակցության խնդիրը կա: Ցանկալի է, որ անասնաբուծության զարգացման ծրագրեր ներդրվեին նաև մեր տնտեսությունում, նպաստավոր վարկեր տրամադրեին: Այդ դեպքում կարող ենք ավելացնել աշխատատեղերը», - ասում է ֆերմերը, ապա հավելում, որ զարգացման միակ ճանապարհը կոոպերացիան է, որին պետք է հավատալ ու վստահել:

Նելլի Սահակյան

ԱԳՐՈ Լրատու
Հոկտեմբեր 15 - 27, 2015 թ.
թիվ 27 (2082)

ԱՄԵՆԱՄՅԱ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

«ARMPROD EXPO» - 2015-Ը ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ՄԵԾ ԹՎՈՎ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ

Ինչպես միշտ, այս տարի ևս, «ArmProd EXPO» միջազգային մասնագիտացված ցուցահանդեսը, որը կայացավ հոկտեմբերի 16-ից 19-ը՝ «Yerevan EXPO» ցուցահանդեսային համալիրում (Մերգելյան ինստիտուտի տարածքում), բազմաթիվ այցելուներ ունեցավ: Ցուցահանդեսին ներկա էին ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, կառավարության անդամներ, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, արտասահմանյան հյուրեր և լրատվամիջոցներ: Հանրապետության վարչապետը, ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի ուղեկցությամբ, դիտեց ցուցադրական տաղավարները, զրուցեց հայրենական արտադրողների հետ:

«Գինու կոնյակի տուն» Շահնազարյան ընկերության տարվա նորույթը՝ 40% սպիրտայնությամբ խաղողի օղին էր: Ընկերությունն ընթացիկ տարում մեծ քանակությամբ խաղող է մթերել ֆերմերներից, որը շարունակվում է նաև այս օրերին: Ցուցադրման էին ներկայացրել նաև 3-ից 20 տարեկան հնեցումով «Շահնազարյան» կոլեկցիան: «Հայաստանի մարգարիտ» անվանումով գինու տեսականին ամբողջությամբ իրացվում է արտաքին շուկայում: Ընկերության վաճառքի բաժնի ղեկավար Կարեն Մաճկալյանի տեղեկացմամբ, արտադրանքը հիմնականում առաքում են ՌԴ, Մոլդովայի, Բելառուսի և Ղազախստանի հանրապետություններ: Բանակցում են Ուկրանիայի և Լեհաստանի շուկաներ արտահանելու ուղությամբ:

Հարուստ ու բազմազան էր Իջևանի գինու գործարանի տաղավարը: Ցուցադրման էին ներկայացրել մրգային օղիներ, գինիներ, կոնյակներ, ինչպես նաև պահածոներ (շուրջ 100 անուն ապրանքներից 54-ը պահածոներ էին): «Այս տարի խաղողի մթերումներ կատարել ենք ոչ միայն Տավուշի, այլև Արարատի մարզի ֆերմերներից: Աշխատել ենք մեծ ծանրաբեռնվածությամբ և մթերել ենք 2300 տոննա խաղող (դա նույնիսկ գերազանցում էր մեր հնարավորությունները)», - ասում է ընկերության գործադիր տնօրեն Ատոմ Եգորյանը: Գործարանի արտադրանքն իրացվում է ՌԴ-ում, Եվրոպայում, ԱՄՆ-ում, շարունակում են նոր շուկաներ որոնել: Ընկերությունը մեծ ուշադրություն է դարձնում ոչ միայն արտադրանքի որակին, այլև արտաքին տեսքին՝ շարունակաբար բարելավելով այն:

«Մանչո Գրուպ» ՍՊԸ-ը ներկայացրել էր «Աստաֆյան» գինու, կոնյակի գործարանի արտադրանքը, ալկոհոլային խմիչքներ՝ կոնյակներ, մրգային նոր գինիներ և օղիներ:

Ընկերության ներկայացուցիչ Ռազմիկ Նիգոյանի տեղեկացմամբ, իրենց արտադրանքը մեծ պահանջարկ է վայելում ներքին շուկայում, որոշ քանակություն էլ արտահանվում է: Մրգային օղիների նկատմամբ մեծ հետաքրքրություն է ցուցաբերում հատկապես եվրոպական շուկան:

Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ի վաճառքի տնօրեն Գագիկ Ֆահրադյանը նշեց, որ տարվա նորույթը սալորի գինին է, որը դեռևս չի շուկայահանվել և առաջին անգամ ներկայացրել են այս ցուցահանդեսում: Նռան շամպայնը, որը ևս գործարանի նորույթներից է, արդեն մի քանի ամիս է՝ վաճառվում է ներքին շուկայում: Առաջիկայում սպառողի համար հաճելի անակնկալ կլինի «Երևան» շամպայնը, որը պատրաստվելու է նոր, ոչ ավանդական տեխնոլոգիայով: Ցուցահանդեսին ներկայացրել էին գինու և շամպայնի հարուստ տեսականի: Բոլորն էլ արժանացան համտեսողների հավանությանը: «Այս տարի խաղողի մթերումներ ենք կատարել Տավուշի և Կոտայքի մարզերից: Գործարան բերված ամողջ խմբաքանակն ընդունվել է»,- նշում է պրն Ֆահրադյանը:

Այցելուների համար հետաքրքիր անակնկալ էր հայրենական արտադրության սև խավիարը, որը ստացվել է Արմավիրի մարզի արհեստական լճերում աճեցվող Սիբիրյան թառափից: «Այս ձկնատեսակը պահանջում է խնամքի առանձնահատուկ պայմաններ, որոնք մենք ապահովում ենք: Ձկները կերակրվում են եվրոպական բարձրորակ կերերով: Ինկուբացիան կազմակերպվում է տեղում: Սև խավիարը, որն արտահանվում է Ռուսաստանի դաշնություն և ԱՄՆ, արտադրվում է ֆրասիական տեխնոլոգիայով», - նշում է «Սասունցի Դավիթ» ՍՊԸ մենեջեր Կարինե Սերոբյանը: Ընդամենը մեկ ու կես տարի է, ինչ կազմակերպել են խավիարի արտադրությունը, որն իր որակի շնորհիվ արդեն լայն ճանաչում ունի սպառողների շրջանում: Արտադրանքի հիմնական մասն իրացվում է մայրաքաղաքում: Եթե տարիներ առաջ հայաստանյան սպառողը ստիպված էր գնել միայն ներկրված թռչնամիս, քանի որ չկար տեղական արտադրություն, ապա ներկայումս այդ խնդիրը լուծվել է՝ հայրենական արտադրողների շնորհիվ: «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատն» այս տարվանից աճեցնում է բրոյլեր տեսակի թռչուններ, ստացված թռչնամիսն արդեն առկա է հայաստանյան շուկաներում: Երևանում ունեն ֆիրմային խանութ: Վաճառքի գծով տնօրեն Արամ Հակոբյանի տեղեկացմամբ, արտադրանքի ինքնարժեքի իջեցման նպատակով, կերարտադրությունը կազմակերպում են տեղում: Թռչնաֆաբրիկան ամբողջությամբ հագեցած է գերմանական սարքավորումներով: «Թռչունները կերակրվում են առանց հավելանյութերի, ինչի արդյունքում ստացվում է բարձրորակ միս: Դրա շնորհիվ մեր սպառողների թիվն օրեցօր ավելանում է», - պատմում է պրն Հակոբյանը:

Մսամթերք արտադրող խոշորագույն ընկերություններից մեկը «Նատֆուդ»-ն է՝ իր վաղուց արդեն ճանաչում ունեցող «Բիելլա» ապրանքանիշով: «Տարիների ընթացքում ձեռք բերված փորձի ու դեպի սպառող կողմնորոշվածության շնորհիվ, ընկերությունն իր կայուն դիրքն ունի տեղական շուկայում: Ձեռնարկության առաջնային խնդիրն արտադրանքի անվտանգության ապահովումն է», - նշում է մարքեթինգի բաժնի ղեկավար Կարինե Ավանեսովան: Նրա տեղեկացմամբ, ցուցադրման էին ներկայացրել 69-ը անվանում (այդ թվում՝ նաև «Հալալ» տեսակի) մսամթերք: Ի դեպ, «Ավանդական» և «Պրեմիում» անվանումներով բաստուրմաները, այս տարվա սեպտեմբերին, մոսկովյան միջազգային ցուցահանդեսում զբաղեցնելով առաջին տեղը, արժանացել են «Տարվա արտադրանք» կոչմանը:

«Ռեյփսիդ» ՍՊԸ-ը գործում է ԼՂՀ Սարգսաշեն գյուղում: Ընկերությունը մասնագիտացել է ռաֆինացված և չռաֆինացված ձեթերի արտադրության գծով: Արտադրում են արևաածաղկի, կտավատի և սոյայի ձեթ: Հատիկի արտադրությունը հիմնականում կազմակերպում են տեղում: Այդ նպատակով ցանքի տակ են դրել 3000 հա հողատարածք: Աշխատանքներում ընդգրկված է 350-400 աշխատող: «Երևանյան շուկան նորույթ է և քայլեր ենք անում՝ ճանաչում ունենալու համար: Կարծում եմ, դրան կնպաստի նաև այս ցուցահանդեսը», - ասում է իրացման բաժնի պետ Արմեն Իսրաելյանը: Նրա տեղեկացմամբ, գործարանը պատրաստ է մթերումներ կատարել նաև ֆերմերներից:

«Զոլոտոյե պոլե» ընկերությունը հայկական շուկայում հայտնի է արևաածաղկի բոված սերմերի և չիպսերի հարուստ տեսականիով: Ապրանքատեսականուն ավելացել է նաև Ղարաբաղի թթի դոշաբը (ընկերությունն իրականացնում է նաև շշալցում):

Տարվա նորույթը, ըստ վաճառքի տնօրեն Գևորգ Բալայանի, բելառուսական չիպսերն են (հումքը ներկրվում է Բելառուսից): «Գոհ ենք ցուցահանդեսի արդյունքներից, մեր արտադրատեսականին հետաքրքրում է այցելուներին, մանավանդ՝ երեխաներին», - ասում է պրն Բալայանը:

Ինչպես միշտ, հարուստ էր «Չորացված միրգ արտադրողների ասոցիացիայի» տաղավարը, որն աչքի էր ընկնում չրերի հարուստ տեսականիով: «Այս տարի առաջին անգամ արտահանելու ենք ավելի շատ չիր, քան նախորդ տարիներին, քանի որ տարին բերքառատ էր», - պատմում է ասոցիացիայի նախագահ Սանդրո Աբովյանը: Նրա տեղեկացմամբ, հայկական չրերի նկատմամբ հետաքրքրությունը և պահանջարկը մեծ է հատկապես ռուսական շուկայում:

«Աշխատում ենք անել հնարավորը, որպեսզի գյուղացին վստահ լինի, որ իր արտադրանքն անպայման իրացվելու է մեր գործարանի կողմից: Այս տարի առաջին անգամ ենք կազմակերպել մթերումներ և, այդ առումով, կայացման խնդիր կար: Հուսով եմ, որ գալիք տարում այդ խնդիրը լիովին լուծում կգտնի», - ասում է Եղեգնաձորի պահածոների գործարանի հիմնադիր տնօրեն Սարգիս Պողոսյանը: Ցուցահանդեսում ներկայացրել էին 40 անվանում բանջարեղենային պահածոներ, կոմպոտներ և մուրաբաներ: «Մեր նպատակային շուկան ԱՊՀ երկրներն են, որոնց համար արտադրել ենք պահանջարկ վայելող տեսականի՝ այն հարմարեցնելով արտերկրի շուկայի պահանջներին», - հավելում է տնօրենը: Ի դեպ, պահածոների հարուստ տեսականիով էր հանդես եկել նաև «Աշտարակ-կաթ» ընկերությունը: «Մեր ընկերությունը հայտնի է ոչ միայն կաթնամթերքով, այլև պահածոներով, մուրաբաներով և ջեմերով՝ «Լեգենդի Արմենիի» ապրանքանիշի ներքո:

Արտադրանքն ամբողջությամբ արտահանվում է ՌԴ, որտեղ այն մեծ

պահանջարկ ունի», - ներկայացնում է ընկերության հասարակայնության հետ կապերի պատասխանատու Լուսինե Հովհաննիսյանը: Ընկերությունը թողարկում է 12 անվանում մուրաբաներ և նույնքան ջեմեր: Աշխատում են շուրջ 1000 ֆերմերի հետ, ովքեր հումքի մշտական մատակարարողներն են:

«ArmProd EXPO» - 2015-ը ավանդաբար նոր գործարար կապերի ձևավորման հարթակ հանդիսացավ, որտեղ իրար հանդիպում են հումք արտադրողն ու վերամշակողը, միջնորդը կամ իրացնողը, ինչպես նաև գյուղատնտեսության զարգացմանն աջակցող կազմակերպությունները: Արդյունքում՝ ընդլայնվում են արտահանման հնարավորությունները՝ արտացոլելով ներքին և արտաքին ագրոգործարարության զարգացման հիմնական միտումները:

Նելլի Սահակյան

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԽՈԶԵՐԻ ԱՖՐԻԿԱԿԱՆ ԺԱՆՏԱԽՏԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Խոզերի աֆրիկական ժանտախտ /ԽԱԺ/ հիվանդությունը դասակարգվում է որպես խիստ հպավարակային վիրուսային հիվանդություն, որն ուղեկցվում են զանգվածային անկումներով մինչև 100%: Միտքահարում է խոզերի ընտանի և վայրի տեսակների բոլոր սեռահասակային խմբերը: Մարդիկ և այլ կենդանատեսակներ չեն հիվանդանում խոզերի աֆրիկյան ծանտախտով: Բնական պահուստներն են օրնիտոդորոս (ornithodoros) դասի տզերը՝ ԽԱԺ վիրուսի ուղղակի փոխանցողները, սակայն վիրուսը կարող է փոխանցվել նաև մեխանիկական ճանապարհով՝ մարդու, թռչունների, ընտանի և վայրի կենդանիների, անասնակերի, ինչպես նաև միջատների միջոցով:

Հայաստանի Հանրապետությունում հիվանդությունն առաջին անգամ արձանագրվել էր 2007 թ. Տավուշի մարզում, այնուհետև՝ 2008, 2010 և 2011 թթ. դեպքեր են արձանագրվել նաև Լոռու մարզի մի քանի համայքներում:

Աշխարհաքաղաքական փոփոխությունները հանգեցրել են մարդկանց տեղաշարժման ինտենսիվության բարձրացմանը, ներպետական, ինչպես նաև միջպետական առևտրի՝ կենդանիների և մթերքի ինտենսիվության բարձրացմանը, հետևաբար դժվար է կանխատեսել վարակիչ հիվանդությունների տարածման ռիսկը, այդ թվում նաև խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդությունը: Խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդությունը արդիական է, քանի որ դրա նկատմամբ մինչ այժմ պատվաստանյութ և բուժում չկա, հետևաբար այդ հիվանդության բռնկումը կարող է տնտեսական և սոցիալական մեծ վնաս հասցնել Հայաստանի Հանրապետությանը: Վերջին տարիներին, Հայաստանում ԽԱԺ-ի դեպքեր չեն արձանագրվել, սակայն, հաշվի առնելով հիվանդության էնզոոտիկ բնույթը, ԽԱԺ-ի դեպքերի կրկնակի առաջացման վտանգը հանրապետության տարածքում դեռևս բարձր է: ԽԱԺ-ի ներկայիս համաճարակային կարգավիճակը պարզելու, ինչպես նաև հիվանդության կրկնակի բռնկումների ռիսկայնության գնահատման և ԽԱԺ-ի դեմ պայքարի ռազմավարության մշակման նպատակով, անհրաժեշտություն էր դարձել հավելյալ ուսումնասիրություններ:

Այդ նպատակով, դեռևս 2014թ., միջազգային կազմակերպության օժանդակությամբ, գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվեց «Խոզերի աֆրիկական ժանտախտի համաճարակաբանական կարգավիճակը և հսկողությունը Հայաստան»

ում ԱՄ-3» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում, մոնիթորինգն իրականացվել է «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի /այժմ «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ/ Տավուշի մարզի համայնքային անասնաբույժ-մասնագետների կողմից: Լաբորատոր հետազոտությունները կատարվել են «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ում:

Ծրագրի իրականացման նպատակով, կազմվել է աշխատանքային խումբ. քննարկումների արդյունքում մշակել է կատարողական հաշվետվությունների ներկայացման ձևաչափերը, իրականացման ժամանակացույցը՝ համադրելով պետական գործառույթի պլանի հետ: Ընդգրկված անասնաբույժները և աշխատանքային խումբը մասնակցել են մասնագիտական վերապատրաստման դասընթացների՝ տարբեր մակարդակներում: Վերապատրաստման դասընթացների արդյունքում, անձնակազմը ստացել է մասնագիտական բարձր որակավորում՝ տիրապետելով ԽԱԺ-ի ժամանակակից ախտորոշման, պայքարի և կանխարգելման մեթոդներին: Հետ հայացք վերլուծության արդյունքում ԽԱԺ-ի տարածման, համաճարակաբանական տվյալների, ինչպես նաև հիվանդության էնզոոտիկ բնույթից ելնելով, համաճարակաբանական կարգավիճակի և հսկողության իրականացման նպատակով, ծրագրի շրջանակներում, ընտրվել են 32 թիրախային համայնքները՝ հաշվի առնելով դրանց աշխարհագրական դիրքը, համաճարակաբանական տվյալները:

Խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդությունն իր կլինիկական որոշ նշաններով նման է խոզերի մի քանի վարակիչ հիվանդություններին, ինչպիսին է խոզերի դասական ժանտախտ հիվանդությունը: Հիվանդության տարբերակիչ ախտորոշման նպատակով, «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական պատվերի ծրագրի շրջանակներում, իրականացվում է ընտանի խոզերի դասական ժանտախտ հիվանդության նկատմամբ կանխարգելիչ պատվաստում՝ «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի անասնաբույժների կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում հավաքագրվել և լաբորատոր հետազոտության են ենթարկվել 4521 արյան և քթի քսուկի նմուշներ, իսկ տնտեսության տարածքներից՝ 59 տիզ: Կատարվել է նաև տզերի դասակարգում, որի արդյունքում օրնիտոդորոս (ornithodoros) տեսակի տզեր չեն հայտնաբերվել:

Լաբորատոր հետազոտությունների արդյունքում նմուշներում ԽԱԺՎ-ի նկատմամբ հակամարմիններ և ԽԱԺ-ի վիրուս չի հայտնաբերվել:

Ծրագրի արդյունավետ իրականացման համար օգտագործվել են Ազգային վիճակագրական վարչության տվյալները, «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվետվությունները և վերլուծական տվյալները, ինչպես նաև՝ Միջազգային Էպիզոոտոլիգիայի Բյուրոյի հրապարակումները:

Այսպիսով՝ 2014թ. Տավուշի մարզում, հաշվետու ժամանակահատվածում, իրականացված 4580 նմուշների լաբորատոր հետազոտության մոնիթորինգի

բացասական արդյունքը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ ներկայումս մոնիթորինգ իրականացրած տարածքում ԽԱԺ-ի վիրուսը չի շրջանառվում: Հիմնվելով այն փաստի վրա, որ օրնիտոդորոս (ornithodoros) դասի տզերը համարվում են ԽԱԺՎ-ի բնական պահուստներ, ուստի դրանց՝ որպես հիվանդության փոխանցողների, առկայության բացակայությունը նվազեցնում է ԽԱԺՎ-ի շրջանառությունը հանրապետությունում:

Ա.Ս.Ավագյան
«Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Մ.Զ.Կարապետյան
անասնաբուժության բաժնի գլխավոր մասնագետ, անասնաբուժական գիտությունների թեկնածուներ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՎԵԼԱՑԵԼ Է ՀԱՋՎԱԳՅՈՒՏ ՏԵՍԱԿԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԳԼԽԱՔԱՆԱԿԸ

Վերջերս WWF հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Կարեն Մանվելյանը և ՀՀ բնապահպանության նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման բաժնի պետ Արամ Աղասյանը ներկայացրել են կենսաբազմազանության, կենդանիների պաշտպանության և Հայաստանում առկա այլ բնապահպանական խնդիրների մասին:

Ինչպես նշել է Կարեն Մանվելյանը, բնապահպանական առումով, վերջին 10-15 տարում իրավիճակը բավականին փոխվել է, Հայաստանում ստեղծվել են նոր պահպանվող տարածքներ՝ «Արևիկ» ազգային պարկ, Զանգեզուրի, Խուստուփի արգելավայրեր և այլն, որոնց շնորհիվ հանրապետությունում ավելացել է հազվագյուտ տեսակի կենդանիների գլխաքանակը: Հատկապես բեզոարյան այծի և հայկական մուֆլոնի տեսակներում գրանցվում է 30 տոկոսի աճ: Հատուկ պահպանվող տարածքների սահմաններն ընդլայնվել են 80 հազար հեկտարով, որը բավականին տպավորիչ թիվ է Հայաստանի նման փոքր հանրապետության համար, քանի որ հատուկ պահպանումը ենթադրում է որոշակի ռեժիմ՝ հողերը վերցվում են տնտեսական շահագործումից և տրամադրվում հատուկ պահպանությանը:

Պրն. Մանվելյանը հավելել է, որ ներկայումս կրճատվել են որսագողության դեպքերը, սակայն այժմ առկա է մեկ այլ մտահոգություն, որը կապված է հանքարդյունաբերության և փոքր ՀԷԿ-երի աշխատանքի հետ, քանի որ հանքարդյունաբերությունն է հանգեցնում կենդանիների ապրելավայրերի կորստին, որի պատճառով էլ վերջին շրջանում հաճախ գայլերը մոտենում են մարդկանց բնակավայրերին և վնասներ պատճառում: Արամ Աղասյանն իր խոսքում նշել է, որ բնապահպանության նախարարությունը մշտապես հետևում է հանքարդյունաբերության համար հատկացվող տարածքներին՝ նախապես անցկացնելով թեստավորում: Հանքարդյունաբերությունը զարգացնելուց առաջ պետք է նախապես որոշել, թե դա ինչ արդյունքներ կունենա: Պրն. Աղասյանը խոսել է նաև ՀՀ Կարմիր Գրքի մասին՝ շեշտելով, որ այն մղում է էնդեմիկ և անհետացող կենդանատեսակների վրա առավել ուշադրություն դարձնելուն:

www.armenia.panda.org

ԱԳՐՈ Լրատու
ՀՈԿՏԵՄԲԵՐ 15 - 27, 2015 թ.
ԹԻՎ 27 (2082)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԿԱՐՏՈՖԻԼԻ և ԼՈԼԻԿԻ ՑԵՑԵՐԻ ԿԵՆՍԱԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԴՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Վերջին երկու տարիներին, Արարատյան հարթավայրի որոշ համայնքներում հայտնաբերվել են կարտոֆիլի ցեց և լոլիկի ցեց վնասատուները (այսուհետ՝ ցեց), որոնք աչքի են ընկնում արագ տարածման ունակությամբ և վնասակարությամբ:

Կարտոֆիլի ցեցը՝ Cnorimoschema operculella Zell (հոմանիշներ - Phthorimaea operculella Zell., Gelechia operculella Zell., C. tabacella Rag., Lita solanela Meyr.) և լոլիկի ցեցը՝ Tuta absoluta Meyr. պատկանում են միջատների դասին (Insecta), թեփուկաթևավորների կարգին (Lepidoptera):

Աշխարհագրական տարածվածությունը

Ցեցի հայրենիքը Հարավային Ամերիկան է: Վնասատուն, տարածման և հարմարվողականության ունակությամբ, այսօր արդեն գրանցված է աշխարհի բոլոր մայրցամաքներում:

Մեր տարածաշրջանում վնասատուն արձանագրված է՝ Ռուսաստանի Դաշնությունում (Կրասնոդարի երկրամաս), Թուրքիայում, Իրանում, Ադրբեջանում, Աբխազիայում: Վնասատուն՝ կերային հակվածությամբ, հանդիսանում է մոնոֆագ-ֆիտոֆագ՝ (մեկ ընտանիքին կամ տեսակին պատկանող բույսերով սնվող): Հիմնականում սնվում է մորմազգի մշակաբույսերով՝ կարտոֆիլ (պալարներ և վեգետատիվ մաս), սմբուկ, ծխախոտ, լոլիկ (վեգետատիվ մաս և պտուղ), պղպեղով, սև մորմ, թմբրախոտ, շիկատակ (բելլադոննա), հարսնախոտ (ֆիզալիս), արջընկույզ, բանգի սև և այլ մոլախոտերով:

Վնասակարությունը

Ցեցն առավել մեծ վնաս է հասցնում կարտոֆիլին և լոլիկին՝ ինչպես բաց դաշտում, այնպես էլ՝ ջերմատներում: Ըստ գրականության տվյալների՝ ԱՄՆ-ում, դաշտային պայմաններում, կարտոֆիլի պալարներին ցեցի հասցրած վնասը հասնում է 25%-ի, լոլիկի պտուղներին՝ 57%-ի, իսկ պահպանության դրված կարտոֆիլին՝ 60-80%-ի: Ճապոնիայում և Հնդկաստանում վնասատուն դաշտում ոչնչացնում է ծխախոտի բերքի 60-80%-ը: Ցեցի թրթուրներով վնասված ծխախոտի տերևները պիտանի չեն արդյունաբերական մշակման համար:

Բույսերի վերգետնյա մասերի վնասվածության դեպքում՝ տերևների վրա նկատվում են ականներ (դրանք ականող ճանճի ականներից տարբերվում են մուտքի մոտ եղած արտաթորանքի առկայությամբ), որոնք առաջանում են երիտասարդ թրթուրների սննդառության արդյունքում՝ հետագայում, միանալով իրար, պատճառ դառնում տերևների և ցողունների չորացմանը:

Լոլիկի պտուղների վրա և պտղամսում առաջացած գորշ անցուղիները, փտման երևույթները, թառամումը և արտաթորանքի հետքերն այն դարձնում են ոչ պիտանի սննդում օգտագործելու համար:

Ցեցը, սննդառության արդյունքում, անցուղիներ է բացում կարտոֆիլի պալարների վրա: Ի տարբերություն լարաթրթուրների բացած անցուղիների, ցեցի թրթուրները՝ կրծելով կեղևը, պալարի ներսում ոլորան անցքեր են բացում (լարաթրթուրներինը՝ համեմատաբար ուղիղ են): Կարտոֆիլի վնասված պալարները վատ են պահպանվում (երկրորդական վնասն արդեն հասցնում են բացված անցուղիներով պալար ներթափանցած տարբեր հիվանդածին միկրոօրգանիզմներ), կորցնում են ապրանքային տեսքն ու որակը, իսկ, որպես տնկանյութ, վնասատուի հետագա տարածման առումով, պահպանված պալարները վտանգավոր են: Պալարների մեջ թրթուրները հիմնականում ներթափանցում են աչքերի միջով: Կյանքի ընթացքում թրթուրներն անցքեր են բացում մորմազգի մշակաբույսերի տերևների, տերևակոթունների և ցողունների վրա, դրանք լցնում արտաթորանքով: Մեկ թրթուրը բացում է 3-6 անցք: Կարտոֆիլի դեպքում, երբ տերևները չորանում են, թրթուրները տեղափոխվում են պալարների վրա: Պալարի վրա՝ թրթուրի ներթափանցման տեղում, գոյանում է վարդա-մանուշակագույն բիծ՝ կեղևի վրա ներս ընկած հետքով, որից հետո պալարն սկսում է փտել:

Վնասատուի զարգացման տարբեր փուլերի կազմաբանական (անատոմամորֆոլոգիական) առանձնահատկությունները

Ցեցի թիթեռը մոխրագույն է, փոքր չափերի: Հանգիստ վիճակում՝ թևերը ծալված են մեջքի վրա: Կարտոֆիլի ցեցի էգերի թևիկների բացվածքը 12-15 մմ է, արուինը՝ 2-2.5 մմ-ով պակաս, իսկ լոլիկի ցեցինը՝ 7-10 մմ: Թևիկները բաց մոխրագույն են, կենտրոնական մասում՝ դեղնավուն բծով: Ընդլայնական ջղի վրա կան մի շարք մուգ, սև կետիկներ:

Առջևի թևիկների ծոփերը բաց մոխրագույն են՝ ներսի կողմից ավելի մուգ փառով: Երկրորդ զույգ թևերն ունեն դեղնավուն մազմզուկներով ծոփեր: Ծոփը թևիկից երկար է: Ներքևի մասը միատարր մոխրագույն է:

Արուների առջևի թևի վրա՝ մեջտեղի ծալքի երկայնքով կա սև, երկայնակի շերտագիծ:

Փորիկը վերևից դեղնամոխրագույն է, իսկ ստորի հատվածից՝ մոխրագույն-սպիտակ: Ձուն սպիտակ է կամ թույլ կրեմագույն երանգով, օվալաձև, 0,4 - 0,55 մմ երկարությամբ, մինչև 0,4 մմ լայնությամբ: Ձվերը ծածկված են արտազատուկով, թաղանթը համարյա հարթ է՝ ոչ մեծ ցանցավորություններով: Սաղմի զարգացմանը զուգընթաց, ձուն մգանում է:

Նոր ծնված թրթուրն անգույն է, բաց վարդագույն կամ կանաչավուն: Հասուն թրթուրը դեղնավուն-վարդագույն է կամ դեղնականաչավուն՝ կախված սննդից: Թրթուրի երկարությունը 10-13 մմ է, լայնությունը՝ 1,5 մմ: Կարտոֆիլի պալարներով սնվող թրթուրն ավելի բաց գույնի է, քան՝ կարտոֆիլի, սմբուկի, ծխախոտի և այլ բույսերի կանաչ հատվածներում զարգացողը:

Հարսնյակը զարգանում է մոխրագույն-արծաթագույն բոժոժում, որը տարբերվում է մյուս ցեցերի բոժոժներից: Հարսնյակի երկարությունը 5,5-6,5 մմ է:

Կենսաէկոլոգիական առանձնահատկությունները

Հասուն թրթուրը կամ հարսնյակը ձմեռում է հողի մակերեսային շերտում՝ բուսական մնացորդների տակ: Թիթեռների թռիչքը սկսվում է վաղ գարնանն ու շարունակվում մինչև հոկտեմբերի վերջը: Դրանք ակտիվանում են մայրամուտից հետո և լուսաբացին:

Թիթեռների կենսագործունեությունը շարունակվում է ջերմաստիճանների բավականին լայն միջակայքում՝ +8-35^{0}C, ինչը վկայում է դրանց բարձր հարմարվողականության մասին: Հասուն թիթեռները ցերեկը հիմնականում թաքնվում են բույսերի տերևների ստորին մասում: Թիթեռը կարող է ապրել երեք և ավելի շաբաթ: Էգը հիմնականում ձվադրում է զուգավորումից հետո՝ առաջին օրվա ընթացքում՝ կարտոֆիլի, տաքդեղի, լոլիկի տերևների ու պտուղների, բաց պալարների (աչքերի շուրջ), պահեստում եղած տարայի վրա և այլն: Մեկ էգը դնում է 160-200 ձու: Սաղմնային (էմբրիոնալ) զարգացման ընթացքը (ձվից մինչև թրթուրների դուրս գալը), կախված ջերմաստիճանից, տևում է 4-ից 40 օր: Ձվից նոր դուրս եկած թրթուրներն ակտիվորեն տեղաշարժվում են: Ջերմաստիճանից կախված, թրթուրի զարգացումը տևում է 11-14 օր, այդ ընթացքում այն մաշկափոխվում է 4 անգամ: Ավարտելով սնումն ու զարգացումը՝ դրանք սովորաբար լքում են պալարները, տերևները, ցողունները և տարբեր թաքստոցներում ոստայնաթելից գործում բոժոժ, որի մակերեսին կպչում են հողի և աղբի փոքրիկ գնդիկներ: 3-4 օրից դրանք վերածվում են հարսնյակի: Հարսնյակի փուլը շարունակվում է 6-8 օր:

Կյանքի տևողությունը ձվից մինչև հասուն (իմագո) փուլ, ամռանը տևում է 22-30 օր, իսկ ձմռանը՝ 2-4 ամիս:

Վնասատուի բոլոր փուլերի համար մահացու են -4^{0}C-ից ցածր և +36^{0}C-ից բարձր ջերմաստիճանները:

Կախված բնակլիմայական պայմաններից՝ ցեցը բաց դաշտում տալիս է 4-13 սերունդ:

Հայտնաբերումը և ճանաչումը

Դաշտային պայմաններում, վեգետացիայի ընթացքում ցեցի հայտնաբերման համար, ստուգման ենթակա են մորմազգիների ընտանիքին պատկանող մշակովի և վայրի բոլոր բույսերը, պահեստարաններում, վաճառակետերում, տնամերձերում կարտոֆիլի պալարները և բանջարանոցային մորմազգի բույսերի պտուղները:

Թրթուրներով վնասված կարտոֆիլի պալարների բնորոշ արտաքին նշանը դրանց մակերեսին կղկղանքների կուտակումն է: Անցքերի վրայի կեղևը չորանում և կնճռոտվում է: Ցեցի թրթուրի անցքերը տրամագծով չեն գերազանցում 2-3 մմ-ը, լցված են կղկղանքներով և պատված սարդոստայնով:

Ցեցի օջախների ժամանակին հայտնաբերման և դրանց սահմանագծման համար շատ արդյունավետ է ֆերոմոնային թակարդների օգտագործումը:

Շարունակելի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀ

ԾՐԱԳՐԻ ՀԱՂԹՈՂԸ

ՀՀ ԳՆ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի «Մրցակցային դրամաշնորհների ծրագիր» բաղադրիչով նախատեսված դրամաշնորհների հաշվին իրականացվող ծրագրերի շրջանակում, հերթական անդրադարձը եղավ Կոտայքի մարզի Նոր Գյուղ համայնքում գտնվող «Դավիթ Հովհաննիսյան» Ա/Ձ-ին պատկանող ֆերմերային տնտեսությունը, որտեղ իրականացվում է Ուկրաինական տափաստանային ցեղի խոզերի ներմուծման, տոհմային տնտեսության հիմնման և նորագույն տեխնոլոգիաներով խոզի մսի արտադրության կազմակերպման ծրագիրը:

Ծրագրի ղեկավարն է Ռ. Թարջումանյանը: Այցի նպատակն էր՝ տեսնել ծրագրի շահառուի կողմից ներկայացվող ծրագրի իրականացման ընթացքը, գրանցված հաջողություններն ու առաջընթացը:

Ուկրաինական տափաստանային ցեղը ստացվել է Ուկրաինայում՝ տեղային և սպիտակ խոշոր ցեղերի խոզերի տրամախաչումից, որոնք օժտված են կայուն ժառանգելիությամբ և իրենց լավագույն հատկություններն ընդունակ են փոխանցել սերունդներին: Այս ցեղի խոզերի առանձնահատկությունն այն է, որ գլուխը միջին մեծության է, թեթևակի կոր կիսադեմքով, ականջները մեծ են, մասնակի կախված աչքերի վրա, ունեն հզոր ոսկրակազմ, խոր ու լայն իրան, լավ լցված բդամսեր, ոտքերն ամուր են, մաշկը խիտ մազածածկույթով է: Լիատարիք վարազները կշռում են 300-350 կգ, իրանի երկարությունը՝ 175-180 սմ, կրծքի փաթով՝ 172-175 սմ: Մեկ ծնից ստացվող խոճկորների քանակը կազմում է 12-14 խոճկոր: Մերունների միջին կաթնատվությունը 48-50 կգ է՝ 21 օրական խոճկորների զանգվածի հաշվարկով:

Ըստ Ռ. Թարջումանյանի՝ հանրապետությունում նշված ցեղատեսակով ապահովելով տոհմային խոզերի բուծումը, այն կբերի արդյունաբերական ու տնտեսական բարձր ցուցանիշներով և մսի գերազանց որակով նոր տեսակների ստացման: Ներդրումները հնարավորություն են տվել ֆերմերին ստանալու խոզի մսի արտադրության տնտեսական բարձր ցուցանիշներ, որն էլ հետագայում խթան կհանդիսանա խոզաբուծությունը հանրապետությունում դարձնելու գյուղատնտեսության եկամտաբեր ճյուղ: Իրականացման կարճ ժամանակահատվածում ստացվել և միջինը 35000 դրամով վաճառվել են մոտ 200 գլուխ ուկրաինական տափաստանային ցեղի խոճկորներ՝ միաժամանակ նպատակ ունենալով 2016 թվականին ստեղծել նաև սեփական կերի բազա: Քանի որ խոզերի աճեցման կարևոր նախապայմաններից մեկը՝ լավ կերակրումն է, իսկ շատ ֆերմերային տնտեսություններում խոզերի կերերի նախապատրաստումն ու կերակրումն իրականացվում է տնային պայմաններում, չվիրուսազերծված տարաներում, որոնք ապահովված չեն վնասակար միկրոօրգանիզմներից, ուստի Ռ. Թարջումանյանը, հաշվի առնելով այդ ամենը, ձեռք է բերել ծրագրով նախատեսված Էքստրուդեր E150 սարքավորումը, որը նախատեսված է ցորենի, տարեկանի, գարու, եգիպտացորենի, ոլոռի և սոյայի էքստրուդացման համար: Էքստրուդերների շնորհիվ մեխանիկական և բարոթերմային ազդեցություն է տեղի ունենում սերմերի բջջային կառուցվածքի վրա, տեղի են ունենում մեխանիկական կառուցվածքի փոփոխություններ, վնասակար միկրոֆլորայի վնասազերծում: Ճնշման կտրուկ անկման շնորհիվ, ելքում տաքացած հացահատիկի մասսայի ծավալը մեծանում է՝ դարձնելով այն ավելի մատչելի կենդանիների ստամոքսի ֆերմենտների համար, որի շնորհիվ մարսողականությունը բարձրանում է 90 %-ով: Ֆերմերի կողմից մշտական հսկողության տակ է գտնվում խոզերի բուժկանխարգելիչ աշխատանքների իրականացման գործընթացը: Ըստ Ռ. Թարջումանյանի՝ իր տնտեսությունը պետք է դառնա արտադրական ձեռնարկություն, որի նպատակն է՝ բուծել տնտեսական բարձր արդյունք ապահովող կենդանիներ:

Նշենք, որ 2014թ. «Դավիթ Հովհաննիսյան» Ա/Ձ-ն մասնակցել էր վերոնշյալ մրցույթին և հաղթող ճանաչվել:

Նարինե Անդրեասյան
Կոտայքի ԳԱՄԿ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

ՈՒՆԱԲ ԿԱՄ ՉԻՆԱԿԱՆ ԽՈՒՐՄԱ

Ունաբը (լատ.՝ Ziziphus) պտղատու բույս է, որը պատկանում է դժնիկազգիների ընտանիքին: Հայտնի է մոտ 40 տեսակ: ՀՀ-ում հանդիպում է ունաբ սովորական կամ չինական ունաբ (Ziziphus jujuba):

Տարածված է Ասիայի, Աֆրիկայի, Հյուսիսային Ամերիկայի և Ավստրալիայի արևադարձային ու մերձարևադարձային շրջաններում: Մշակում են Ճապոնիայում, Պակիստանում, Աֆղանստանում, Չինաստանում, Թուրքմենիայում և Ուզբեկստանում: Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերի ստորին լեռնային գոտիներում (մինչև 1400 մ բարձրություններում): Աճում է գետահովիտներում, լեռների հարավային լանջերին:

Խոշոր կամ միջին մեծության, 4-8 մ բարձրության ծառեր են: Մատղաշ ընձյուղները փշապատ են: Բազմամյա ճյուղերը բաց գորշագույն են, ծռմռված: Տերևները՝ ձվաձև են, էլիպսաձև, երբեմն՝ նշտարաձև: Ծաղիկները՝ երկսեռ են, խաչաձև փոշոտվող, դեղին գույնի:

Բույսի անվանումն ունի պարսկական ծագում՝ Zizufun են անվանել ցանկացած տեսակի ուտելի պտուղները: Ֆրանսիայում ունաբի պտուղներն անվանում են ժուժուբա: Ունաբը մոտ 400 տարի առաջ մշակվել է Չինաստանում, ինչի պատճառով բույսն անվանում են նաև չինական խուրմա: Հայտնի են ունաբի մոտ 400 ենթատեսակ, որոնց պտուղները տարբերվում են արտաքին տեսքով, գույնի երանգավորումով, համով, քիմիական բաղադրությամբ:

Հասուն մրգերի պտղամիսը պարունակում է սպիտակուցներ, ճարպեր, օրգանական թթուներ, ածխաջրեր, թթուներ, C և P խմբի վիտամիններ, բետտա - կարոտին, ինչպես նաև B_1, B_2 և B_5 խմբի վիտամիններ, իսկ հանքային նյութերից՝ կալցիում, ֆոսֆոր, կալիում, երկաթ, մագնեզիում, կոբալտ և մեծ քանակությամբ յոդ: Պտղամիսը հաստ է, բաց կանաչ կամ սպիտակ գույնի, քաղցր է (մինչև 30 % շաքարներ): Հասունացման նախնական շրջանում ունաբի պտղի համը նման է խնձորին, հասունանալուց հետո պտուղը փափկում է, իսկ համով հիշեցնում է փյունիկյան արմավի պտուղը (խուրմա):

Ծառի առաջին տերևները սկսում են բացվել մայիսի վերջերին: Ծաղիկները բացվում են հունիսին, պտուղների հասունացման շրջանը սկսվում է հոկտեմբերին և շարունակվում է մոտ մեկ ամիս: Ծառը տերևաթափ է լինում դեկտեմբեր-հունվար ամիսներին:

Ունաբ սովորականի բոլոր մասերն ունեն բուժիչ հատկություններ:

Օգտակար հատկությունները

Պտուղներն օգտագործում են որպես արյան ճնշումը կարգավորող միջոց: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

Ունաբն իր բուժական հատկանիշներով հայտնի է եղել դեռևս հնուց: Բուժական նյութերով օժտված են պտուղները, տերևները, սերմերը, բողբոջները, արմատները և բնափայտը: Ամենալավ արդյունք ապահովում են թարմ վիճակում դրանք օգտագործելիս: Պտուղներն օժտված են հեմոստատիկ, միզամուղ, ցավազրկող, արյուն մաքրող, հակամիկրոբային և վերքերը բուժող ազդեցությամբ: Կորիզներն ունեն հանգստացնող և թեթև քնաբեր հատկություն, իջեցնում են զարկերակային ճնշումը:

Չոր կամ թարմ պտուղներն ուտելը օգտակար է հիպերտոնիկ հիվանդության ժամանակ: Պտուղների եփուկն օգտակար է սակավարյունության, լուծի, թուլության, գլխապտույտի, չոր հազի դեպքում, բարձրացնում է տոնուսը և իջեցնում արյան մեջ խոլեստերինի քանակը: Տերևներն օժտված են խորխաբեր հատկությամբ: Տերևների թուրմը կարելի է օգտագործել հիպերտոնիայի, թոքերի հիվանդությունների դեպքում: Ունաբի արմատների եփուկը խթանում է մազերի աճը և ամրացնում մազարմատները:

Բույսի պտուղներն ուտելի են թարմ և չոր վիճակում, պատրաստում են՝ մուրաբա, ջեմ, հյութեր, գինի, կոմպոտներ, մարինադներ և այլն: Ունաբի ծառը դիմացկուն է ջերմաստիճանի փոփոխությունների հանդեպ:

Հետաքրքիր է իմանալ, որ տերևը ծամելիս փոխվում է ընկալումը համի հանդեպ՝ մարդը չի զգում քաղցր և դառը համերը, իսկ զգայունությունը աղի և թթու համերի հանդեպ լիովին պահպանվում է: Ունաբի կորիզներից ստացված պատրաստուկները հակացուցված են հղիներին:

Թարգմանությունը՝
Լիլիթ Գասպարյանի

Փշատենի նեղուրներն

Նեղուրներն փշատենիներն արծաթափայլ թփեր են կամ 3-6 մ բարձրությամբ ծառեր, որոնք վայրի բնության մեջ լայնորեն տարածված են Միջին Ասիայում, Դազախստանում և Հյուսիսային Կովկասի արևելյան հատվածում, ինչպես նաև Հայաստանում:

Ծաղիկները պարունակում են եթերային յուղ, իսկ տերևները՝ մինչև 350 մգ/% C վիտամին:

Փշատենու պտուղը՝ փշատը կամ ունաբ-փշատը, սննդային և դեղորայքային նպատակներով օգտագործվում է անհիշելի ժամանակներից: Նույնիսկ անապատներում՝ ուղտերի քարավաններով ճամփորդելիս, միջինասիացիներն իրենց հետ որպես սնունդ և բուժման միջոց վերցնում էին հիմնականում փշատ:

Միջին Ասիայում հացաթխման և ապուրների պատրաստման մեջ լայնորեն օգտագործում են փշատի պտուղներից ստացված ալյուրը: Փշատի թարմ պտուղները և նրանցից պատրաստված գինին տարածում են գտել նաև տարբեր երկրների ժողովուրդների խոհանոցում:

Միջին Ասիայում եփած պտուղները կամ եփուկն առավել հաճախ օգտագործում են մանկական լուծի ժամանակ: Այն պատրաստելու համար 30 գ պտուղներին ավելացնում են մեկ բաժակ եռացրած ջուր և փակ ամանի մեջ 30 րոպե եռացնում ջրաբաղնիքում: Եփուկը քամում են տաք վիճակում, գոլացնում և խմում ուտելուց առաջ, օրը՝ 3-4 անգամ:

Ժողովրդական բժշկության մեջ փշատի պտուղները հայտնի են որպես ջերմ իջեցնող, վերքամոքող, խորխաբեր և հակաճիճվային միջոց: Գիտականորեն հաստատված է, որ պտուղները դրսևորում են հակաբորբոքային, կապող ազդեցություն և արդյունավետ են կոլիտների, բորբոքային հիվանդությունների ժամանակ: Իրենց բուժական նշանակությամբ հայտնի են նաև փշատի ծաղիկները և տերևները:

Փշատի պտուղները պարունակում են 40% շաքար, 11% սպիտակուց, 36% դաբաղանյութ, օրգանական թթուներ և մեծ քանակությամբ կալիում:

Սրտի աշխատանքի կարգավորման նպատակով հիվանդներին տալիս են շնչելու փշատի ծաղիկների եթերային յուղը, իսկ ջրաթուրմը և ոգեթուրմը խորհուրդ են տրվում շնչառական օրգանների հիվանդության, բարձր ճնշման դեպքում և սիրտ-անոթային համակարգի աշխատանքի խթանման նպատակով:

Ծաղիկների ջրաթուրմը. 6գ ծաղիկներին ավելացնել մեկ բաժակ եռացրած ջուր և 15 րոպե եռացնել ջրաբաղնիքում՝ փակ ամանի մեջ: Ջրաթուրմը սառեցնել և քամել: Խմել ուտելուց առաջ, 1/3 բաժակ, օրը 3 անգամ:

Փշատի տերևների թուրմով թրջոցները օգտակար են ռևմատիկ և գոտկային ցավերի ժամանակ:

Չորացրած տերևների եփուկն օգտագործվում են մրսածության, բարձր ջերմության, ստամոքսի և աղիքների բորբոքային հիվանդությունների ժամանակ:

Թարմ տերևները դնում են թարախային վերքերի վրա:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
ԱԳՐՈ Լրատու
թերթի
1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 համարինը՝ 120 դրամ
2015 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ամսագրի
1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 1350 դրամ
Բաժանորդագրությունը իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները,
«Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ատրաշ» կազմակերպությունները

ԱԳՐՈ Լրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության
հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ
Գլխավոր խմբագիր և
համարի պատասխանատու՝ Լ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 124
ստորագրված է տպագրության 26.10.2015 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա